ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023թվականի N 941-Ա

«ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հիմնադրել «Վեդի համայնքի զարգացման» հիմնադրամ /այսուհետ՝ Հիմնադրամ/:

2. Սահմանել, որ Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքն է, որի անունից հանդես եկող լիազորված անձը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի, Վեդի համայնքի ղեկավարն է:

3. Հաստատել Հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հիմնադրամի գործադիր տնօրենի /այսուհետ՝ տնօրեն/ ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մեխակ Խոստեղյանին /նույնականացման քարտ՝ 010751089, տրված՝ 05.02.2019թ., 025-ի կողմից, հաշվառման հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, Ոսկետափ բնակավայր, Անդրանիկի փողոց, տուն 13/:

5. Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հիմնադրամի պետական գրանցումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**